ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

29 օգոստոսի 2014 թվական N 36-Ա

ՌՄԲԱԿՈԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎՆԱՍՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ''Իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 07.08.2014թ թիվ 823-Ն որոշումը

Կարգադրում եմ.

1. Ռմբակոծությունների հետևանքով վնասված բնակելի տների բնակիչներին պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

   Հանձնաժողովի

   նախագահ – Ադամյան Կարեն, մարզպետի տեղակալ

   Քարտուղար – Ափինյան Ֆելիքս, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ

   Անդամներ - Մխիթարյան Միշա- մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ Հարցերով վարչության պետ

   Վաղարշակ Սուքոյան- մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

   Բաբլումյան Ասքանազ - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչ

   Բաղալյան Գրիշա- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ

   Գևորգյան Արման – մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ

2. Հանձնարարել հանձնաժողովին ուսումնասիրել բնակիչներին պատճառված վնասները և ներկայացնել առաջարկություն վնասների հետևանքների փոխհատուցման համար տուժած բնակիչներին պետական աջակցության հատկացման չափի վերաբերյալ:
3. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Հ.ԱԲՈՎՅԱՆ

29 օգոստոսի 2014թ
ք.Իջևան